ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1915-1917թթ.)

ՄԱՐԻԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության հետևանքով Ռուսական կայսրության տարածքում հայտնված հայ փախստականներին և որբ մնացած երեխաներին ապաստանելու, նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու համար հարկավոր էին արտակարգ միջոցառումներ: Մինչդեռ այդ հարցում ցարական իշխանությունները չէին շտապում: Հայ գաղթականությանը, այդ թվում որբ երեխաներին, անհրաժեշտ օգնություն ցույց տալը և նրանց խնամքն իր ամբողջ ծանրությամբ սկզբից ևեթ ընկավ արևելահայ գյուղացիության ուսերին, որի վիճակն առանց այն էլ նախանձելի չէր: Բարձր գնահատելով հայրենակիցների ջանքերը փախստականների և որբ երեխաների փրկության գործում, լեգենդար հերոս Անդրանիկը նշում էր. «Եթե չլիներ Կովկասի հայ բնակչության անմնացորդ նվիրումը, ցեղասպանությունից փրկված հայերի մեծ մասը դատապարտված կլիներ մահվան»:[1] Ավելի ուշ Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին ուղղած իր նամակում Պետրոմայի դեպուտատ Պապաջանովը գրում է. «Այն միջոցները, որոնք պետությունը տալիս է փախստականների կարիքների համար և այն օգնությունը,որ ցույց են տալիս բարեգործական ընկերությունները շատ չնչին կլինեին, եթե չլիներ Անդրկովկասի հայ գյուղացիության կարեկցական վերաբերմունքը հայ փախստական եղբայրներին օգնելու և վերջին կտոր հացը նրանց հետ կիսելու պատրաստակամությունը»:[2]

Միայն 1915թվականի օգոստոսի 30-ին Ռուսական կառավարության կողմից ընդունվեց «Գաղթականների վիճակի ապահովման միջոցառումների վերաբերյալ» օրինագիծ, որի հիման վրա Ռուսաստանի ներքին գործերի նախարարության ղեկավարության ներքո նախարար Պլևեի նախագահությամբ ստեղծվեց գաղթականների գործով զբաղվող հատուկ խորհուրդ՝ իր մասնաճյուղերով,որոնցից մեկն էլ Կովկասի փոխարքայությանը կից ստեղծված կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գրասենյակն էր՝ գեներալ-մայոր Թամամշևի գլխավորությամբ:

Ցեղասպանության հետևանքով որբ մնացած երեխաների խնամքը սկզբում որոշվեց հանձնել հայ ընտանիքներին, որոնք որդեգրելով նրանց, կապահովեին ապրուստի անհրաժեշտ միջոցներով: Սակայն այս մոտեցումը երեխաների փրկության հարցին դժգոհությունների ալիք բարձրացրեց հայ հասարակության զգալի մասի մոտ,նրանք մտավախություն ունեին, թե այդ երեխաների հարազատների հնարավոր հայտնվելու դեպքում, որդեգրված երեխաներին այնուհետև դժվար կլինի գտնել ու նրանց վերադարձնել:[3] Ավելի նպատակահարմար էր որբացած երեխաների համար հատուկ ապաստարանների հիմնումը: Այս գործում խիստ կարևորվում էր հայ հասարակական կազմակերպությունների և ընկերությունների դերն ու օգնությունը, որոնց գործունեությունը Ռուսական կայսրության տարածքում արգելված էր (ինչպես օրինակ, Բաքվի մարդասիրական օգնության (ստեղծվել է 1864թ. Բաքվում), Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (ստեղծվել է 1881թ. Թիֆլիսում) և այլն), քանի որ նրանց կրթական-լուսավորչական գործունեությունը չէր համապատասխանում Կովկասում ցարական իշխանությունների վարած գաղութային քաղաքականությանը: Այսուհանդերձ Առաջին աշխարհամարտի տարիներին գաղթականների և որբ երեխաների խնդիրներով զբաղվելու և նրանց հոգսերը հոգալու համար այդպիսի կազմակերպությունների գործունեությունն անհրաժեշտություն դարձավ: Ի հետևանք դրա՝ փախստականների տեղավորման, որբ երեխաների հայտնաբերման (շատ երեխաներ գտնվում էին քրդերի մոտ կամ սարերում ու անտառներում, և հասարակական կազմակերպություններից շատերը մեծ դեր խաղացին նրանց հայտնաբերման և որբանոցներում տեղավորելու ուղղությամբ) և նրանց խնամքի կազմակերպման նպատակով վերականգնվեցին նախկինում եղած բարեգործական ընկերությունները, հիմնվեցին նորերը: Իրենց հերթին ցարական իշխանություններն այդ երեխաների պահպանության համար նշանակում էին նպաստներ: Հայազգի պետական գործիչ, Պետդումայի անդամ Պապաջանովի միջնորդությամբ հաջողվեց սահմանել յուրաքանչյուր որբ երեխայի համար 25 ռուբլի միանվագ և 15 ռուբլի ամսական չափով պետական նպաստ:[4] Գումարները փոխանցվելու էին Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գրասենյակ, իսկ այդեղից՝ որբախնամ մարմիններին: Որպեսզի այս գործում արհեստական դժվարություններ չստեղծվեն և գումարների փոխանցման ընթացքում խնդիրներ ու խառնաշփոթ չառաջանան, կապված որբախնամ մարմինների բազմազանության հետ, հայ բարեգործական ընկերությունների ընդհանուր ժողովը, որը տեղի է ունենում 1915թ., Թիֆլիսի հայոց եկեղեցու առաջնորդարանում, որոշում է ստեղծել մեկ ընդհանուր օղակ՝ այդ կազմակերպությունները Կովկասյան համապատասխան իշխանությունների հետ կապելու[5] և պետական հատկացումները հասցեատերերին փոխանցելու նպատակով:[6] Այդ օղակի դերով հանդես է գալիս Կովկասի Հայոց բարեգործական ընկերությանը կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն:[7]

1915-17թթ. յուրաքանչյուր որբանոց գտնվում էր այն բարեգործական հաստատության ենթակայության տակ,որի կողմից ստեղծվել էր:

Բարեգործական կազմակերպությունների և ընկերությունների աշ-

խատանքները համակարգելու և նրանց վրա վերահսկողություն սահմանելու նպատակով կոմիտեն 1916թ. հոկտեմբերին ստեղծում է Որբանոցային հանձնաժողով[8], որի կազմում էին՝ Տեր-Միրաքյանը, Հ. Սաղեյանը, ընդհանուր լիազոր՝ Ղազազյանը: Բացի դրանից՝ Կոմիտեն ուներ նաև Որբանոցային բաժանմունք իր տեսուչներով, որոնք պարբերաբար շրջում էին որբանոցներում և տեղեկություններ հավաքում դրանց դրության, տեղ գտած թերությունների և բացթողումների մասին:[9] Իր հերթին՝ Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գրասենյակն ուներ բոլոր տվյալները որբանոցների ստեղծման, հիմնադիր կազմակերպությունների, նրանց ծախսերի, եկամուտների մասին[10] և այլ մանրամասներ (այս բոլոր պահանջները հստակ ձևակերպվել էին Թամամշևի կողմից մշակված՝ որբանոցների կանոնադրության մեջ):[11]

Արդեն 1915-16թթ. որբախնամ գործով զբաղվում էին Եղբայրական օգնությունը, Միացյալ ընկերությունը՝ Ալեքսանդրոպոլում, Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտեները, Գանձակի Գաղթականական կոմիտեն, Կանանց կոմիտեն (Թիֆլիսում և Ալեքսանդրոպոլում), Ծխական համայնքը, Օրիորդաց կոմիտեն, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, անհատ խնամակալներ և այլն: Կազմակերպությունների և ընկերությունների այս բազմազանությունը մի կողմից գովելի էր, մյուս կողմից՝ ուներ իր բացասական հետևանքները՝ որբանոցները չունեին մեկ ընդհանուր ծրագիր, նպատակներ, գործնական ուղղություն: Բացի դրանից, այդ որբանոցները ցրված էին Անդրկովկասի շուրջ 16 վայրերում և հաճախ գործում էին տարանջատ:[12]

Նման պայմաններում բոլոր այդ կազմակերպությունների և ընկերությունների որբախնամ աշխատանքները կանոնավորելը, դրանք մեկ ընդհանուր նպատակին ծառայացնելը դառնում են խիստ կարևոր խնդիրներ, որովհետև այդ խնդիրները վերաբերվում էին մեր ժողովրդի ապագա սերունդի ամենաանպաշտպան մնացած հատվածին՝ հայ որբ երեխաներին: Այդ կապակցությամբ Փ. Թերլեմեզյանը գրում էր. «Տաճկահայ զանգվածի այն բեկորները, որոնք մեզ հասան թոշնած և սնավոր,ազգի խնամքին ձգեցին քանի մը հազար որբեր,որոնք մեր յոյսերն են, ի միջի այլոց, և մեր լավատեսութեան աղբիւրը: Ատոնք են, որ պողպատէ հիմերն են լինելու այն սրբազան աւերակներին, որոնք մեր ազգային գոյութեան խարիսխն են, հետևապէս մեր պաշտամունքի առարկան»:[13]

Ամենից առաջ կարևոր էր ճշտել, թե ի՞նչ նպատակներ են դնում իրենց առջև որբանոցները և որբախնամ մարմինները, որից էլ բխելու էին մյուս կարևոր հարցերը՝ կրթության, մասնագիտության, դաստիարակության և այլն: Ընդհանրապես, որբանոցների ստեղծման և նրանց նպատակների մասին ժամանակին տարբեր կարծիքներ էին շրջում: Ոմանք գտնում էին, որ որբանոցները միայն ժամանակավոր ապաստարաններ են, և նրանց խնդիրը միայն երեխաների ֆիզիկական գոյության ապահովումը պետք է համարել: Այս տեսակետի կողմնակիցներն այն կարծիքին էին, թե պատերազմը շուտով կավարտվի և գաղթականությունն ու որբ երեխաները հնարավորություն կունենան վերադառնալ իրենց հայրենի օջախներ: Այս դեպքում որբ երեխաների կրթության և մասնագիտության հարցերն

այդքան էլ չէին կարևորվում: Ցավոք, պատերազմը ձգձգվում էր, որը երեխաների թիվն ավելանում, ուստի կարևոր էր դառնում այդ երեխաների ոչ միայն ֆիզիկական գոյության, այլև կրթության, մասնագիտության և այլ կարգի խնդիրների լուծումը:

Գնալով մեծանում էր որբանոցների նշանակությունն իբրև մի հաստատության, որտեղից դուրս պիտի գային գրագետ և որոշակի մասնագիտություն ունեցող քաղաքացիներ: Այդ է պատճառը, որ ժամանակի հասարակական-քաղաքական և մշակութային գործիչները (հատկապես՝ արևմտահայ գործիչները), ժամանակի մամուլը, սկսեցին ավելի սևեռուն ուշադրություն դարձնել որբանոցային խնդիրներին, նրանցում գոյություն ունեցող անցանկալի երևույթներին:

Ինչպես ցույց տվեցին հետագա ուսումնասիրությունները, այդ գործում գոյություն ունեցող թերությունների մեծ մասն առաջին հերթին հետևանք էր համապատասխան պաշտոնյաների ոչ ճիշտ և շատ հաճախ նույնիսկ պատահական ընտրության: Այսպես՝ Անդրկովկասի շուրջ 60 որբանոցներ այցելած Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ Գ. Էդիլյանի կարծիքով որբանոցային կառավարիչների միայն 20%-ն էր մոտավորապես համապատասխանում իր կոչմանը[14], իսկ դաստիարակչական մեթոդները, որոնք կիրառվում էին երեխաների նկատմամբ, շատ դեպքերում դաժանության էին հասնում և պարզապես աններելի էին.

«Մուրճ»ամսագրում կարդում ենք. «Երեք տարեկան երեխա, որ հազիվ էր խոսում և կարոտ էր մայրական խնամքի, սիրո և գուրգուրանքի, ուշանում է ճաշի զանգից հետո, և մանկավարժուհին ծնկաչոք կանգնեցնում է երեխային հատակին ու քաղցած պահում»:[15]

Շատ որբանոցներում ամենամեծ թերությունն այն է եղել, որ կառավարիչների և դաստիարակների մի մասը նույնիսկ հայերեն խոսել չի իմացել (օրինակ Էջմիածնի որբանոցներից մեկում), իսկ Թայիրովի անվան որբանոցում կառավարիչը հայերենն արգելված լեզու է դիտել, և երեխաներին ստիպել է խոսել միայն ռուսերեն: Քիչ չեն եղել և այն դեպքերը, երբ կառավարիչները, որոնց վստահված է եղել այդ պատասխանատու աշխատանքը, հեղինակություն չեն ունեցել աշխատակազմի շրջանում, և դա նույնպես վատ է անդրադարձել երեխաների վրա (օրինակ՝ Էջմիածնի 1-ին որբանոցում, երբ տնտեսվարը, չենթարկվելով կառավարչին, այնպիսի սննդակարգ է մշակել,որի արդյունքում 137 երեխաներից 54-ը ստացել են ստամոքսի հիվանդություններ):[16]

Որբանոցներից շատերը չեն ունեցել անգամ երեխաների շարժի մատյաններ (տեղեկություններ նրանց տեղափոխությունների, մահացության և այլնի վերաբերյալ) և հաշվեմատյաններ՝ ծախսերի և ստացված գումարների մասին: Եթե այս ամենին գումարենք և այն, որ որբանոցների մեծ մասը չեն ունեցել դպրոցներ, արհեստանոցներ՝ երեխաների մասնագիտական կրթությունն ապահովելու համար, ապա պատկերն ամբողջական կդառնա:

Իրավիճակը շտկելու նպատակով Հայկական կենտրոնական կոմիտեի կողմից ստեղծված Որբանոցային հանձնաժողովը մշակում է նոր կանոնադրություն[17], որը փորձում է որոշակի հստակեցում մտցնել որբա-

նոցների ներքին կյանքի (դաստիարակություն, կարգապահություն), կրթական ոգու (հայեցի կրթություն), երեխաների մասնագիտական և այլ կարևոր հարցերում: Ցավոք, կանոնադրությանը վիճակված էր դատապարտվել անգործության: Շուտով իր գործունեությունն է դադարեցնում և Որբանոցային հանձնաժողովը:

Արևմտահայությունը, որն ամենից շատն էր հետաքրքրված գաղթական որբ երեխաների ճակատագրով, դրությունը բարելավելու ամենաարդյունավետ միջոցը համարում էր որբախնամ գործում ավելի շատ արևմտահայերի ընդգրկելը[18] և կրթական գործն արևմտահայ ուսուցիչներին հանձնելը, որպեսզի երեխաները չկտրվեն արևմտահայ իրականությունից և իրենց կողքին ունենան սրտակից ու սրտացավ, նույն վիշտն ապրած, իրենց լեզուն հասկացող, հոգատար մարդիկ:[19] Այդ առաջարկները գործնական տեսք են ստանում 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ստեղծվում է Արևմտահայ ազգային խորհուրդը, և որբ երեխաների դպրոցական գործը, ինչպես նաև 14 տարեկանից բարձր որբերի խնամքը և կրթությունը հանձնվում է Արևմտահայ խորհրդին:[20] Սակայն պատմական իրադարձությունների կտրուկ շրջադարձը և 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը խանգարում են այս գործընթացի հետագա բարելավմանը և նոր ու ավելի բարդ խնդիրների առջև կանգնեցնում հայ հասարակությանը:

Խոսելով որբախնամ գործում թույլ տրված բացթողումների և թերացումների մասին,չպետք է անտեսել դրանցում օբյեկտիվ գործոնների առկայությունը: 1914-15թթ. համընդհանուր քաոսի, շուրջ 200000-250000-ի հասնող արևմտահայ գաղթականության առկայության,տնտեսական ծանր դրության պայմաններում այնքան էլ հեշտ չէր որբ երեխաների համար բնակարանների, հագուստի, սնունդի, դպրոցի, արհեստանոցի և դրանց համար անհրաժեշտ պարագաների հայթհայթումն ու որակյալ դաստիարակ-մանկավարժներով ապահովելը:

Որբանոցների ստեղծման գործընթացը ժամանակի սղության և որբ երեխաների թվաքանակի շարունակական աճի պատճառով կատարվեց հապճեպ, առանց նախնական պատրաստվածության: Եթե 1915թ. սկզբին որբանոցներում ապաստանած երեխաների թիվը պաշտոնական տվյալներով 2000 էր[21], ապա 1916թ. նույն տվյալներով արդեն 4500-5000, որոնցից՝

Թիֆլիսում	9 որբանոց	743 երեխա	Դիլիջանում	12 որբանոց	767 երեխա
Նոր Բայազետում	4	320	Աշտարակում	5	457
Էջմիածնում	2	223	Երևանում	7	548
Ալեքսանդրապոլում	7	344	Գանձակում	2	144
Ախալցխայում	1	94	Ախալքալակում	1	125
Ղարաքիլիսայում	2	188	Կարսում	1	39
Քարվանսարայում	1	111	Իգդիրում	1	57
Ախտայում	1	150	Բաքումում	1	73
Բաքվում	6	295	Սանահինում	1	167

Ընդամենը՝ 4896 երեխա"

Նման պայմաններում ի հայտ եկած առաջնահերթ խնդիրներից մեկը որբանոցային շենքերի հարցն էր: Հարկավոր էր, որպեսզի դրանք լի-

նեին ընդարձակ, ապահովված լինեին ջրով, ունենային կոյուղի, լվացքատուն և այլն: Ցավոք, ոչ միշտ էր հնարավոր նման ազատ շենքեր վարձակալելը, ուստի որոշ դեպքերում ստիպված էին լինում օգտագործել զորանոցների, դպրոցների, ամառանոցների և այլ շենքեր, իսկ դրանք, հասկանալի պատճառներով, չէին կարող բավարարել բոլոր պահանջները: Օրինակ, Դիլիջանի շուրջ 16 որբանոցներից միայն մեկն էր քարե շինություն, մյուսները փայտից էին՝ նախատեսված ամառանոցի համար և ձմռանը նրանցում շատ ցուրտ էր լինում:

Որբ երեխաների թիվն այնքան արագ էր մեծանում, որ մեկ սենյակում ստիպված էին լինում ապաստանել ավելի քան թույլատրելի թվով երեխաներ, և դա զանազան հիվանդությունների արագ տարածման պատճառ էր դառնում, իսկ շատ որբանոցներում ջրի պակասությունը պատճառ էր դառնում երեխաների սանիտարահիգիենիկ պայմանների անբավարար վիճակի, մաշկային հիվանդությունների առաջացմանն ու տարածմանը:

Հաջորդ կարևոր խնդիրը երեխաների սննդի հարցն էր:Դրա հետ կապված դժվարությունները հետևանք էին պատերազմի պատճառով օրօրի աճող թանկությունների և ապրանքների դեֆիցիտի: Ցարական կառավարության կողմից նշանակված ամսական 15 ռուբլի նպաստը չէր բավականացնում անգամ երեխաների սննդին: Բայց ի պատիվ իրենց որոշ կազմակերպություններ, ինչպես օրինակ Մոսկվայի Հայկական կոմիտեն, սեփական միջոցների (հանգանակություններ, բարեգործական համերգներ, զանազան մոցոցառումներ) հաշվին կարողացան լուծել անչափ կարևոր այս հարցը ևս: Հաշվի առնելով երկրում առկա ընդհանուր տնտեսական ճգնաժամը, որբանոցներում երեխաների սնունդը կարելի էր բավարար համարել, իսկ շատ տեղերում՝ լավ: Երեխաներին տրվել է սնունդ օրական 3-4 անգամ, շաբաթական 2-3, շատ տեղերում նաև 4-6 անգամ մսեղեն կերակուր: Հաշվի առնելով երեխաների առողջական վիճակը, օրինակ Դիլիջանի որբանոցներում, որտեղ հիմնականում հիվանդ երեխաներն էին տեղավորված, սնունդը շատ ավելի լավ է եղել, սննդակարգում ավելացվել է կաթնամթերքի չափաբաժինը:[23]

Հագուստի, հատկապես կոշկեղենի, սպիտակեղենի և որ ամենակարևորն էր, դեղորայքի պակասություն գրեթե միշտ եղել է: Նման պայմաններում ավելի էր կարևորվում եղած սուղ միջոցների նպատակային և ճիշտ օգտագործումը, սակայն միշտ չէ, որ խնդրի կարևորությունը գիտակցվել է որբախնամ կազմակերպությունների պատասխանատուների և որբանոցների կառավարիչների կողմից և արժանացել նրանց սրտացավ վերաբերմունքին: Օրինակ, Երևանի Ա և Բ որբանոցային հիվանդանոցներում բժիշկների փոխարեն մաշկային հիվանդությամբ տառապող երեխաներն իրենք են քսել իրենց դեղերը:[24] Արդյունքում՝ հիվանդությունները երկարել են, դեղորայքը՝ սպառվել: Որոշ որբանոցներում էլ խնայողություններ կատարվել են ոչ այն տեղերում, որտեղ անհրաժեշտ էր: Օրինակ Էջմիածնի Եղբայրական օգնության 1-ին որբանոցում էժանության համար վարձվել է անգրագետ քույր, մինչդեռ կառավարչուհու կարծիքով խնայողություն պետք է արվեր ծառայողներին կրճատելով, որովհետև նրանցից

շատերի գործը կարող էին և հաճույքով անում էին որբանոցի երեխաները (սենյակները մաքրել,ափսեները լվանալ և այլն):[25]

Այնուհանդերձ, արդեն 1916թ. վերջերից մինչև 1917թ. հոկտեմբերը որբանոցային բազմաթիվ խնդիրներ գրեթե հարթված էին՝ որբ երեխաների շրջանում մահացության թվի պակասելն արդեն իսկ նրանց կեցության պայմանների բարելավման լավագույն ապացույցն էր: Մեծ աշխատանքներ էին կատարվել նաև նրանց դաստիարակության և կրթության բնագավառում՝ Դիլիջանում, Աշտարակում, Էջմիածնում ստեղծվել էին որբանոցային հատուկ դպրոցական կենտրոններ, Դիլիջանի, Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի որբանոցներում բացվել էին արհեստանոցներ: Ավելի հաճախ կազմակերպվել են զանազան մշակութային միջոցառումներ, որոնք նպաստել են երեխաների ընդհանուր դաստիարակությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] «Հորիզոն»,1917թ. հունվարի 26:

[2] Багдасарян Р. Геноцид и армянская интеллигенция России, Ер.,2003.стр. 181

[3] *Այնուամենայնիվ, մինչև 1-2 տարեկան երեխաներին ստիպված էին հանձնել առանձին ընտանիքների խնամքին: Հայտնի է, օրինակ, որ Հովհ. Թումանյանն իր դստեր՝ Նվարդի հետ Էջմիածնից Երևան են տեղափոխում 43 կրծքի երեխաների՝ նրանց հոգատար ընտանիքներին հանձնելու նպատակով: Որդեգրվեց ընդամենը 80 երեխա:*

[4] ՀԱԱ, ֆ. 28,ց. 1, գ. 602, թ. 10:

[5] Նույն տեղում, թ. 12,նաև՝ «Հորիզոն», թիվ 228, 1915թ. հոկտեմբերի 9:

[6] *Եթե Պետրոգրադը բաց էր թողնում նպաստներ փախստականների և որբ երեխաների համար, ապա Կովկասյան վարչակազմը պահանջում էր դրամի բաշխումը կատարել նահանգապետերի և պաշտոնյաների միջոցով, և գումարների ուղիղ կեսն իր նշանակությանը չէր ծառայում:*

[7] *Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (այսուհետև՝ ԿՀԲԸ) նախաձեռնությամբ պատերազմի սկզբում կազմվում է Պատերազմից տուժածների օգնության Հայկական կենտրոնական կոմիտեն, որն իր գործունեության առաջին շրջանում ծրագրում էր կազմակերպել պահեստային աղքատ զինվորների ընտանիքների ապահովության և վիրավոր զինվորների օգնության գործը, բայց շուտով կորցնելով իր ինքնուրույնությունը, դառնում է ԿՀԲԸ-ի մասնաճյուղը: Բարեգործական այդ հաստատությունները ստանում էին պետական նպաստ Թամամշևի գրասենյակից (յուրաքանչյուր երեխայի համար 15 ռուբլի ամսական կամ 50 կոպ. օրական) Հայկական կենտրոնական կոմիտեի միջոցով և իրենց ծախսերի համար հաշվետու էին Կոմիտեին:*

[8] ՀԱԱ,ֆ. 1, գ. 618, թ. 9, ց. 28:

[9] *Մակայն Որբանոցային հանձնաժողովը, իր անդամների կարծիքով, չունենալով լիազորությունների հստակեցում և հեղինակություն, շուտով հրաժարական է տալիս:*

[10] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 162, թ. 2:

[11] Կանոնադրությունը բաղկացած էր 11 կետերից և ուներ հետևյալ բովանդակությունը.

1. Որբանոցների գրանցման համար բոլոր նրանք, ովքեր իրենց վրա են վերցնում որբ երեխաների խնամքը, պետք է այդ մասին գրավոր տեղյակ պահեն

փախստականների տեղավորման գլխավոր լիազորին.

2. Արդեն բացված որբանոցների մասին համապատասխան մարմինները կամ անձիք պարտավոր են յուրաքանչյուր ամիս տեղեկություններ հաղորդել դրանց հիմնադրման, որբերի թվի, եկամուտների, ծախսերի և այլ փոփոխությունների մասին.

3. Յուրաքանչյուր որբանոց պետք է ունենա մի անձ, որի պարտականությունը պետք է լինի որբանոցի կառավարումը և հաշվեմատյանների պահպանումը.

4. Որբանոցները պետք է ունենան հատուկ գրքեր, որտեղ պետք է գրանցվեն երեխաների անձնական տվյալները (ծննդավայր, անուն ազգանուն, տարիք, ծնողներ և այլն).

5. Կառավարիչները պետք է յուրաքանչյուր ամիս հաշվետվություն ներկայացնեն այն կազմակերպության ծախսերի և եկամուտների մասին, որի խնամքի տակ է գտնվում տվյալ որբանոցը.

6. Որբանոցներում պետք է կատարվի միօրինակ գրանցում երեխաների հիվանդությունների, մահացությունների և բժշկական այցելությունների մասին.

7. Յուրաքանչյուր որբանոց պետք է ունենա որոշակի ռեժիմ.

8. Խնայողության նպատակով մի քանի որբանոց կարող են ունենալ մեկ ընդհանուր դպրոց.

9. Անհրաժեշտ է արհեստներ սովորեցնել դպրոցում.

10.Գյուղերում գտնվող որբանոցներում պետք է սովորեցնել գյուղատնտեսություն.

11. Արհեստներ սովորեցնել,եթե գտնվի այն սովորեցնող արհեստավոր:

[12] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 161, թ. 31 (*1916թ. հունիսից-սեպտեմբեր ամիսների տվյալներով այդ որբանոցներից 5-ը գտնվում էին Ալեքսանդրոպոլում, 4-ը՝ Նոր Բայազետում, 3-ական՝ Ախտայում, Ղուրդուրդուլիում և Քարվանսարայում, 6-ը՝ Երևանում, 8-ը՝ Աշտարակում, 12ը՝ Դիլիջանում, 2-ական՝ Էջմիածնում, Ղարաքիլիսայում և Գանձակում, 1-ական՝ Իգդիրում, Օշականում և Սանահինում, 9-ը՝ Թիֆլիսում, 5-ը՝ Բաքվում*):

[13] «Հորիզոն» ,թիվ 194, 1915թ. օգոստոսի 29:

[14] «Արև», թիվ 290, 1916թ. դեկտեմբերի 30:

[15] «Մուրճ», թիվ 20, 1916թ. հուլիսի 9:

[16] ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 86, թ. 14:

[17] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 618, թ. 10:

[18] *Գ. Էդիլյանի տվյալներով՝ բոլոր որբանոցների կառավարիչներից 39-ը ռուսահայեր էին, իսկ տաճկահայեր՝ միայն 12-ը*:

[19] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 618, թ. 10:

[20] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 253, թ. 34 նաև՝ նույն տեղում, գ. 168, թ. 381:

[21] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 602, թ. 10:

[22] Էդիլյան Գ. Գաղթականական որբանոցներ, Թիֆլիս, 1917, էջ 46:

[23] «Համբավարեր», թիվ 26:

[24] «Աշխատանք», թիվ26, 1916թ. հուլիսի 30:

[25] ՀԱԱ, ֆ. 472, ց. 1,գ. 86, թ. 14:

Резюме

Начало попечительского дела сирот в Восточной Армении и Закавказье (1915-1917гг.).

Мариам Киракосян

Забота о детях-сиротах, спасшихся от геноцида и нашедших приют в Восточной Армении, стала одной из главных задач 1915-1917гг. Для этих детей открылись детские дома в 16 местах Закавказья, где приютили около 5000 детей-сирот. Приютским делом стали заниматься все те, у которых была возможность. С одной стороны это было похвально, но с другой – затрудняло контроль над этими организациями, в работе которых иногда имелись недостатки. Для решения этого вопроса, создавались комиссии контроля.

И несмотря на ряд недостатков, в 1915-1917гг. удалось приютить и обеспечить необходимыми условиями жизни и образования нескольких тысяч детей-сирот.

Summary

The Orphan Caring Activity in Estern Armenia and Transcaucasia (1915-1917).

Mariam Kirakosyan

The one of main tasks during 1915-1917 was to care about the orphans. which survived the Armenian Genoide and found heaven in the Eastern Armenia. The orphanages were established for those children in 16 towns of TransCaucasia. in which about 5000 orphanes lived. Everyone. who had an possibility began to deal with this problem, which made some difficulties in supervising the activities of those organisations, which in some cases, had some omissions. Supervising Committees were established for fulfilling this task.

Though there were some omissions during this work, these organisations played a great role in alliviating the fate of those orphans and helped them to receive education.